

Հայր սուրբը կրէր թէ՛ արդի վարժապետները բոլորն ալ կախարդ են, անհաւատ են, մորթեալ են, մոլորեցուցիչ են, իրաւ իրենք երկք չորս լեզուներ գիտան, ամա չար նախանձով լի չեն սովորեցնում իւրեանց աշակերտներին, անձախնորանց այն են դաս տալի թէ՛ ձեր Տօր մօր ջեբերից փող գողացէք և բերէք մեզ տուէք, չէ՞ մենք ձեր վարժապետն ենք :

Այդպիսի ուսումը Աստուած կտրէ :

Կայէն էլ շատ ուսումնական էր, ի՞նչ օգուտ, իւր անմեղ եղբօր արիւնը թափեց : Յուդան էլ շատ ուսումնական էր, ի՞նչ օգուտ որ Քրիստոսին մատնեց : Բայց դուք թէև ոչինչ ուսում չունէք, ամա բարեպաշտ էք, Աստուծոյ պատուիրանքներին հնազանդ ու պահող էք : դուք լաւ կանէք սիրելիք առհասարակ հետի մնալ հիմակուայ ուսումից, որ ձեր որդիքն ալ անհաւատ վարժապետների նման պատակեր չգուրս գան :

Ձեր բարեպաշտութիւնը ամեն բանից գովելի է : նայեցէք երկինքը, որ եօթը զաթ է, այնտեղ 10 ահազին պալապետներ կան, իննը ինն դաս հրեշտակների համար : իսկ մէկը ձեզ նման բարեպաշտ քրիստոնեաների համար, որին աւելի կարժանանայք ձեր առատ տուրքով *) և լն և լն :

Վեհափառ Հայրը, որ իւր բոլոր հմտութեանց հետ քաջ ձեռով կհասկանայ քարոզների վսեմութիւնը և նորանց սրբազան նպատակը, անշուշտ և անկասկած եթէ իմանայ և տեղեկանայ՝ թէ իւր բանաւոր Տօրին այսպիսի ցանցառ քարոզներ կը տրուին, անտարբեր աջօք չնայել և վերջ տալ կը ճգնի դորանց, որոնց կարծուելուն աթիւ՝ եթէ թող տայ մեր հասարակաց Հայրը՝ ես և ս յերես անկեալ առ ոտս նորին կաղաչեմ՝ և կաղերսեմ :

Յակնիք Գ. Կարապետեանց Ա.

(*) Թէև առանց բացառութեան եւ վատ ոգիէ թեյազրեալ նաեւ տպէտ մի հոգեւորականի այսպիսի քարոզը ընդհանուրին չվերաբերիր, բայց եւ այնպէս սլարժանք եւս չէ, ուստի առ այժմ այս դրութիւնը կը հրատարակեմք, եւ զնայն վարդապետ ի զգուշութիւն կը ճիսուելիմք ամեն շարժմանց եւ բանից եւ քարոզից մէջ միանդամայն : Կ. Խմբ.

Հ Ա Գ Ե Ի Ո Ր Դ Պ Ր Ո Յ
Շ Խ Մ Ա Հ Մ Ո Ւ Տ Գ Ի Ի Ղ Ի

Խոհարարութեան Աշխարհայ ամսագիրը.

Հին նախիջևանից հինգ վերստ հեռաւորութեամբ դէպ ի արեւելեան հիւսիս գտնուում է այս գիւղը 100ի չափ տուն Հայ բնակիչներով, որոնց մեծ մասը գաղթական են Պարսկաստանից.

Որպէս Կողբեցիք նմանապէս և սորա ըստ մեծի մասին պարապում են աղահատութեամբ նախիջևանայ մօտիկ ըլած աղահատութիւնը : Թէև առաջուց բաւական արտօնութիւններով և մեծ եկամուտով, իսկ այժմ ընդ հակառակը, բայց որ զէս և իցէ այլ բանը (աղահատութիւն) գառել է այս գիւղացուն թէ նիւթական և թէ բարոյական օգուտ, որով և սորա այս կողմերի գիւղացիներից նշանաւոր են կացուցել իւրեանց :

Արդէն 1865 թուից այս գիւղը բաղաւորվել է ունենալով մի փոքրիկ ուսումնարան, որը հակառակ շատ տեղ պատահածներին ոչ թէ երբեմն գնացել և երբեմն կանգնել է՝ այլ հետզհետէ և փոքր առ փոքր զօրացել և մինչև ներկայ տարիս այդպիսի աստիճանաբար զալ գացողութեամբ շարունակվում է : Որպէս ամեն մի սկզբնաւորութիւնը նախ և յառաջ սկիզբն է առնում մի կամ երկու մարդից, սորա համաձայն և այն ուսումնարան երկու անձի և երկու համագիւղացի երիտասարդների վաստակ և ծնունդ է, որոց անունները կարծում եմ, որ հետաքրքրական է բարեսէրների համար :

Մկրտիչ Քահանայ Իսահակեան, որը աւարտած լինելով նախիջևանու գաւառական ուսումնարանում և իւր ուսումնասէր և եռանդուն գործունէութեամբ սորա և նորա մօտ և ինքնակրթութեամբ բաւականին զարգացնելով իւր իմացականութեան և կրթութեան մասը, և որպէս և բնական է այսպիսի հոգիներին իւրեանց վսեմ ստացուածքին հաղորդակից անել և ուրիշներն, այսպէս և սա առաջարկում է իւր գիւղացուց իւր ձրի աշխատութիւնը, և իւր օգնական գտանելով Պ. Երմիա Աւետեան երիտասարդը, (որը թէև անուսումնաբոլորովին, բայց և ուսումնասէր ցան-

կուլթեմար) գործունեայ և հաստատ կամքի տէր լինելով ընկեր է հանդիսանում (այն ժամանակ տիրացու Իսահականցին և այսպէս երկուք ձեռք ձեռքի տուած մինը իւր կրթութեամբ և անձնանուիրութեամբ, իսկ միւսը իւր աշխատութեամբ և օգնութեամբ սկսում են այս գործը առանց որևիցէ օգնութեան միւսների կողմից և շարունակում են շորտարի. վերջապէս մինչև ժողովուրդը հասկանալով սոցա հասարակաց էական օգտին և ոչ մի ուրիշ բանի ծառայած և նուիրուած լինելը՝ նախապէս շնորհակալութեան և երախտագէտ լինելու համար հոգաբարձու Երեմիային տալիս են շնորհակալութեան թերթ, իսկ ուսուցչի համար կարգում են թեթև ոտձիկ՝ և որպէս զի իւրեանց ուսումնարանը կարող լինի հաստատ ապագայ և հիմնաւոր շարունակութիւն ունենալ՝ խոստանում են միշտ թոշակ վճարելու և ձեռներից եկած օգնութիւնը տալու. ապա խնդրազրով դիմում են Արքազան Սինօզին օգնելու իւրեանց, որը յարգելով սոցա խնդիր՝ թող է տալի իւրեանց եկեղեցու սուրբ նշանի մասանց տարեկան արդիւնքը յօգուտ ուսումնարանին ի գործ դնել :

Երկու տարի էլ այսպէս է անցանում, և ապա անցեալ տարի երկու հոգաբարձու և սակեացնելով, Պ. Յարութիւն Եղևակարեանց (նմանապէս մի ուսումնասեր և գործունեայ երիտասարդ), որը ծանուտեղական պաշտօնովը աւելի ևս միջոց ունի ներգործելու յօգուտ ուսումնարանին, և միւս ևս Պ. Մասում Հայրապետեանցը զի զի իշխաններից մէկը, Հոգաբարձական թիւ և ընկերութիւն կանոնաւոր գրութեան մէջ գնելուց զինի, ջանադիր եղան իւրեանց ուսուցչին ևս օգնելու՝ այդպէս և ներկայ տարույս սկզբիցը հրաւիրեցին երիտասարդ պարոնի Հայոց լեզուի ուսուցչութեան գործին, և այդ ևս յաջողայնելով շարունակում են Այժմս պէտք է աւել, որ ուսումնարանը (ծխական դպրոցը) բաւականին հաստատ և բարեկարգ գրութեան մէջ է, քառամնաչափ մանուկներ ուսանում են Հայոց և ռուսաց լեզուով՝ որքան պահանջելին է, մի այնպիսի դպրոցից. Քամբ շունենալով գովելու, որ չափազանցութեան կասկած չտան շատերին, բաւականանում են աւել, որ իւր համադաս դպրոցներից այս զիւղական

հանգամանքներում, չափաւոր անելով նախադաս է գտնուել և կգտանուի ճանապարհորդող և այցելու անձանց առաջ, որոնք երբեմն պատահել են այս տեղ :

Իմ ուրախութիւնը մեծ էր՝ երբ անցեալ տարիներումը Սինօզի Ատենադպիր Պ. Թաղիանտեանցի ընկերութեամբ առաջին անգամ տեսայ, Այդ ուսումնարանը, թէ նորա և թէ իմ նկատողութիւնքը և խորհրդատուութիւնքը, ներկայ տարում կրկին այցելութեամբ յառաջադէմ և իրագործուած եմ գտնում :

Ահա գնդեցիկ օրինակ. թէ երբ մի սկիզբ ձեռնարկում է եռանդով անձնանուիրութեամբ և միշտ հասարակաց օգուտն ունի աչքի առաջը, դա հետզհետէ կարող է աճել հաստատութիւն ստանալ և վերջապէս պտուղ բերել, թէև այդ սկիզբը լինէր թող՝ աննշան, մի կամ երկուսի գործ, և (զարմանալի չէ) հաւածանքով ու դժուարութեամբ, որ սովորական է ամեն բարի բանի հանդէպը դուրս գալու :

Ահա ի՞նչ է նշանակում աղին և կրօնի ու մարդկային կոչման սպասաւորող մշակ քահանայ, որի գործը արդարացնում է իւր կոչումն :

Երանի թէ մեր ազգակից երիտասարդները և մանուանդ նորա՝ որոնք ընդունել են (կամ կամենում են ընդունել) այդ քահանայական վեմ՝ և ծանր լուծը, հետեւող և նախանձող լինին այս օրինակին—և կրկին երանի՛ եթէ ևողեւոր Եղևակարեանցի հիշողար պատրաստելու և տալու ազգին այսպիսի մշակներ—և թէ այսպիսիների բարոյական և կենսական սթըր կաղաւրելու և խրախուսելու հոգ կտաներ :

Ես գիտեմ, որ այս տողերովը դիպում եմ Մկրտիչ Քահանայի համեստութեանը. բայց և չեմ կարող թաղուցանել իմ ներքին զպացմունքը շարտայայտելու այս տեղ հրապարակական շնորհակալութեամբ, որպէս և Երեմիա Աւետեանին այն հոգաբարձութիւնն՝ որ արդարեւ բարձել է հոգսեր և քաշել է լուծ, այն արժանի է և պարտք է Շխմա՛մն տի ծնողք պարտական են նոցա. իսկ նորանց ապագայ սերունդը, կկանգնան նի նոցա համար իւր յաւետ երախտագիտութեան արձանը :

Մի բան միայն, որ ցանկալի է աւելացնել ինձ այս տեղ, և այդ է բարի և խոնարհ առաջարկութիւնն մեր առ Աւհարիան Հայր և առ բարձր Հոգևորական Տեսչութիւնն օգնելու որպիսիւիցէ միջոցով. այդ տեղում մի աղջկանց ուսումնարան բանալու՝ մինչ կայ և գործում է Մկրտիչ Քահանայն, Սորանով կատարեալ կլինի այդ դիւղի երջանիկ ապագայն, սորանում աւարտ կստանայ Տէր Մկրտչի աշխատանաց բարի ակնկալութիւնը:

Ոչ ապաքէն որդիք պէտք է և իրաւունք ունին պահանջելու Հօրիցք բարի և օգտակար բան, և ահա ես և իմ հետ Շխմահմուտցի Հայերը վստահանում ենք անելու այսպիսի խնդիր մեր Ազգայնութից—մեր Բարձր Հայրերից:

Մեր ակնկալութիւն—իմ ցանկութիւնը պատկուած պիտի տեսնամ միւսանդամ այս դիւղը պատահելու միջոցում. խօսքս վերջացնում եմ՝ ասելով «Մեծ յուսով սպասում եմ»:

Ղանապարհորդ Իշխասարը.

Ի 14-ն Մայիսի 1871-ի
Ի Ն-ի Գ-ն

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Բ Հ

Որովհետև ես թողի թիֆլիս քաղաք, Հայ-ի-ի-ի Աշխարհ օրագիրը դադարեց ներկայ թուին Ադրիլի և Մայիսի ամսատետրակը հրատարակելուց յետ:

Հայ-ի-ի-ի Աշխարհի ներկայ 1871 թուիս ստորագրողներից ստացված փողից հանելով հինգ ամսի համար Հայ-ի-ի-ի Աշխարհի Խմբագրութեանը հասանելին, մնացած դումարը պատիւ ունիմ ահա ներկայացնել Աշխարհի Խմբագրութեանը, և խնդրում եմ մնացած ամիսներին բարեհաճեցէք ուղարկել Աշխարհը Հայ-ի-ի-ի Աշխարհի փոխարէն առանձին յուցակով ներկայացրած Մեծ Պարոններին:

Իսկ այն մնացած ստորագրողներից, որոնք դեռ ևս վճարած չէին բաժանորդագիրը, ինչ լուր եմ ահա բարեհաճեն հասցնել ինձ կամ Յ մանկիթ, եթէ ցանկանում են այսուհետև ներկայ թուին Հայ-ի-ի-ի Աշխարհի փոխարէն Աշխարհը ստանալ կամ 2

ման. 10 կ., որ պատկանում է Հայ-ի-ի-ի Աշխարհի Խմբագրութեանը ներկայ թուիս անցած Յ ամիսների համար, երբ նոքա ստանում էին օրագիրը:

Հայ-ի-ի-ի Աշխարհի Խմբագրող
Ս. Ստեփանի:

1871 յուլի 13

ԲՈՒՈՔ Ի ՇՈՒՇԻՈՅ

Խմբագրութեան Աշխարհ ամսագիրը

Հոգաբարձութիւնս Մեզու Հայաստանի Մայիս 1 թուով համար 16 թերթին մեջ նոյն լրագրող պատուարժան խմբագրի Շուշույ քաղաքի ազգային Հոգևոր դպրոցի գրութեան և Հոգաբարձական կառավարութեան վերայ արած հակասական դիտողութիւնները և անհիմն լրոց վերայ հիմնուած ընդդէմ ճշմարտութեան պատրուակեալ ստու-թիւնները կարգաց. բայց ոչ խոսվեցաւ և ոչ ցուցուցաւ. վասնզի դիտէ որ, մեր Ազգային լրագրութեան մէկ քանիսն սովոր են առանց հիմնաւոր տեղեկութեան ընդպարսխօս լծկակցաց խօսքին հաւատ ընծայել. երբեմն կամաւ և երբեմն ակամայ նոցա խօսքերով սողորուիլ. ճշմարտութիւնը այսպէս, լոյսը՝ խաւար, բարիքը՝ չար, բարեկարկութիւնը՝ անկարգութիւն հրատարակել:

Թեպէտ Հայ հասարակութեան բուն ի բան և Ազգասէրն մասն արդէն տեղեակ է լրագրաց ոմանց բունած այսպիսի անկանոն ընթացից, ուստի և անարժան կ'համարէր Հոգաբարձութիւնս այնպիսի անտեղի գրութեան ուղարկութիւն դարձնել և կամ պատասխանել, սակայն որպէս զի տկարամիտ մտքեր և մեր հեռաբնակ Ազգայինը չ'զայթակղուին, վասնորոյ թող լով նոյն գրութեան ուրիշ անուղղադատ կէտերու վերայ առ այժմ խօսիլ, միայն պարտք կ'համարի այսչափ ինչ ծանուցանել որ, դպրոցս ամենից աւելի ապահոված դպրոցներից մին անուանելը երևակայական ցնորք է. Հոգաբարձութիւնս իբրև իւր պարտուց անձանօթ, իւր պարտականութիւնը և իրաւունքները կանոնաւորապէս չ'գործադրող մեղապրելը՝ լուրովին զուպարտութիւն է. և սորա աշխատանքը